ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 915-Ա «23» հուլիսի 2024 թ.

«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-24/122» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված Էրեբունի-Երևան մշակութային միջոցառման կազմակերպման գնման հայտը.

1. Ձևավորել «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-24/122» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Գ. Դալլաքյան	Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի առաջին կարգի մասնագետ /հանձնաժողովի նախագահ/
Ա. Վարոսյան	Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի առաջին կարգի մասնագետ
Լ. Շահբազյան	Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի առաջին կարգի մասնագետ

2. Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության ծառայությունների գնումների բաժնի առաջատար մասնագետ Է. Սիմոնյանին:

3. Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունը ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի փողոց հ. 1, հ. 126 սենյակ):

4. Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ